

19-րդ դարու սկզբին, որ անոնք բռնեցին քիւրտերու եւ թուրքերու բուռն ընդհարումներու ժամանակ, ընդհարումներ, որոնք գերազանցապէս ազատագրական նշանակութիւն ունէին: Եւ իրօք, երեք դարու քրտական կէս անկախութիւնը 19-րդ դարու սկզբէն կը վտանգուէր: Թուրք պետութիւնը իր բոլոր ուժերը լարած՝ կը խորանար Քիւրտիստանի ներսերը, իսկ քիւրտերը ամէն անգամէ աւելի Ղիմազըլուութիւն ցոյց կուտային, եւ գերագոյն ճիգեր կը թափէին իրենց ինքնիշխանութիւնը վերկելու համար: Թրքական արշաւանքը սկիզբ կ'առնէր 1812-ին եւ զօրաւոր թափով մը կը շարունակուէր երկար տարիներ, մինչեւ որ 1847-ին վերջնական յաղթանակը կը մնար թրքական պետութեան:

Պատմական եւ քաղաքական վերին աստիճանի կարեւորութիւն ունեցող այս կռիւներու ընթացքին քիւրտերու, եթէ ոչ ամբողջութիւնը, գոնէ մեծամասնութիւնը, կրցաւ մէկ ճակատով ներկայանալ, նախազգալով այն վտանգը որ կը սպառնար քրտական փոքրիկ իշխանապետութիւններուն: Իսկ հայերը, այդ ճակատագրական դէպքերու ընթացքին, բացի աննշան բացառութիւններէն, թրքական օրիւնքաւարներն ունէին: Բնական է, թրքական այս օրիւնքաւարները գինական մասնակցութեամբ շարտայալտուեցաւ: Այդ ուղղութեամբ հայերը ոչ ոյթ ունէին եւ ոչ ալ թրքական կառավարութեան հրաւերը: Սակայն իրենց համակրութեամբ թրքական կառավարութեան հետ էին, կարծելով որ քրտական ապօրինի ու անսանձ իշխանութեան տեղ, կուգայ օրինաւոր իշխանութիւն մը՝ երկիրը բարենորոգելու:

Հայ ժողովրդի բռնած այս խիստ ծանրակշիռ դիրքը բազմակողմանի լուսարանութեան կը կարօտի: Ուստի 19-րդ դարու առաջին կէսի քրտական ապստամբութեան մանրամասնութիւնները թուելէ առաջ, պատկերացնենք այն դարաւոր փոխյարաբերութիւնները, զոր ունէին հայերն ու քիւրտերը, որպէսզի տեսնենք թէ ինչպէս թշնամութիւնը զարգացեր է այդ երկու ազգերու միջեւ, ու տուած է այն ահուելի հետեւանքները, որոնք մեր օրերու պատմութեան ծանր արդիւնքներն են:

Քիւրտերու եւ հայերու յարաբերութեան

աշխարհագրական շրջանները երկուքի պէտք է բաժնել: Առաջին շրջանակը կ'ընդգրկէ Սեբաստիա, Սարրերդ, Տէրսիմ, Երզնկա եւ էրզրում գաւառները. երկրորդը կը տարածուի Բայազիտէն (Ալաշկերտ) հարաւ ու արեւելք, իր մէջ առնելով Վանի, Մուշի, Բիթլիսի, Բոսթանի, Մուսուլի, Սասնոյ եւ Տիգրանակերտի գաւառները:

Առաջին շրջանակը, հէնց թրքական տիրապետութեան առաջին օրերուն, թատր կը դառնար անվերջանալի ներքին պատերազմներու, որոնք կը պայթէին քիւրտերու եւ թրքական ենիչէրիներու (պետական զօրք) միջեւ: Որովհետեւ այդ գաւառներու վրայով կ'անցնէր այն մեծ ճանապարհը, որով թուրքերը իրենց ենիչէրիները կը կեդրոնացնէին էրզրում, որպէս Պարսկաստանի սահմանամերձ կեդրոնի մը: Երկրորդ շրջանակը, որու մէջ կը մտնէր Քիւրտիստանը՝ համեմատաբար ճանապարհէ դուրս էր, եւ կը վայելէր սուլթան Սէյիմի օրերէն մնացած անկախութիւնը: Տեղեկութիւններ 16-րդ եւ 17-րդ դարու այս շրջաններու դործերու մասին կը պակսին: Ճամբորդները եւ տեղեկատուները առաջին շրջանի մասին աւելի շատ զբաւոր վկայութիւններ թողած են, քան երկրորդ շրջանի մասին, շրջան մը, որ 18-րդ եւ 19-րդ դարերուն միայն աւելի հետաքրքրութեան առարկայ դարձած է, ինչ որ կը տեսնենք շարք մը գիտնական եւ քաղաքական անձերու ճամբորդական գրութիւններէն, որոնց պիտի անդրադառնամ յետոյ:

1550-ական թուականներէն սկսած, Փոքր Ասիոյ կեդրոնական գաւառներէն մինչեւ էրզրում, թուրքիա մատնուած էր ներքին անիշխանութեան մը, որ տեսնց մինչեւ 18-րդ դարու սկիզբները, մօտ հարիւր յիսուն տարի: Կառավարական փաշաները մէկը միւսի դէմ էին, ու ոմանք ալ մինչեւ իսկ կեդրոնական կառավարութիւնը անտեսելու չափ ըմբոստ: Ենիչէրիները տիրական թիւղորդներն էին ու փաշաները՝ շատ անգամ անոնց գերին: Քիւրտ ցեղապետներն ու փաշաները չէին ենթարկուիր ոչ Բէյլերբէյիներուն (նահանգապետ փաշա) եւ ոչ ալ կեդրոնական կառավարութեան: Այս վերջինները ենթակայ ըլլալով ենիչէրիներու կամայականութեանց եւ արիւնալի արարքնե-